# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*22 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 51

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱՇՈՏ ԹՈՎՄԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի Վայք քաղաքի Աշոտ Թովմասյան փողոց թիվ 4 հասցեում գտնվող մանկապարտեզի/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 21022020-10-0012/ վարչական տարածքում համայնքապետարանի կողմից կառուցված 162,01 քմ մակերեսով հասարակական նպատակային նշանակության մանկապարտեզի մասնաշենքը համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն:
2. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Դիմել ՀՀ կադաստրին՝ սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:
4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը ենթակա չէ վաճառքի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*24 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 52

## ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿՉՈՒՀԻ ԼԻԼԻԱ ԽԱՉԻԿԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և և հիմք ընդունելով քաղ. Լիլիա Ասատրյանի դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 47 շենքի հարակից տարածքում գտնվող քաղ. Լիլիա Խաչիկի Ասատրյանի կողմից կառուցված 51,30 քմ մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,00324 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինական կառույցին տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի 47/8:
3. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 51,30 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00324 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Լիլիա Խաչիկի Ասատրյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*25 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 53

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀԱԳՆ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության համայնքների/բնակավայրերի/ գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 2-ի թիվ 609-Ն և 2010թ. մարտի 4-ի թիվ 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայքի համայնքի Վայք քաղաքի բնակիչ Վահագն Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողատարածքների/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 2351483 և 2563681/ գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հողամասի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողատարածքների միավորումից առաջացած ընդհանուր մեկ միավոր հողատարածքին տրամադրել հետևյալ հասցեն- Վայք համայնք, քաղաք Վայք, Շահումյան փողոց հողատարածք թիվ 6/18:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru


*26 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 54

**ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 38 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետերով,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի ղեկավարի 2021թ. փետրվարի 18-ի «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԻՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02002 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 38 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
   - Որոշման վերնագրում և 1-ին կետում նշված <<**Արին**>> բառերը փոխարինել <<**Ազատեկ**>> բառերով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*26 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 55

## ՖԵԴՅԱ ԵՐՎԱՆԴԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ 26.02.2015 ԹՎԱԿԱՆԻ ԿՆՔՎԱԾ <<ՊԵՏԱԿԱՆ/ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ/ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղ. Ֆեդյա Երվանդի Մարգարյանի գրավոր խնդրանքը, ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Երկկողմանի համաձայնությամբ լուծել ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի և քաղաքացի Ֆեդյա Երվանդի Մարգարյանի միջև 2015թ. փետրվարի 26-ին կնքված <<Պետական/համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին>> պայմանագիրը:
2. Դիմել կադաստրի կոմիտեին՝ նշված պայմանագիրը երկկողմանի համաձայնությամբ լուծելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*30 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 56

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,07038 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2006թ. մարտի 9-ի թիվ 391-Ն որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքի Ջերմուկի խճուղի 4-րդ նրբանցքում գտնվող առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0.07038 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը ճանաչել որպես առանձին միավոր:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողատարածքը հասցեավորել որպես-Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճ. 4-րդ նրբանցք, հողատարածք թիվ 2/2 :
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

Հաստատում եմ՝
Կ.Տ.
« 30 » 03 2021թ.

# ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

[illegible] ին Հողհատկացման հիմք
Անուն, ազգանուն

Վայոց Ձոր — Մարզ
Վայք — Համայնք
[illegible] 2/2 — Հասցե

ՄԱՍՇՏԱԲ 1:1000




| ՀՈՂԱՄԱՍԻ | | | | | | | ՇԻՆՈՒԹՅԱՆ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափեր | Սահմանակից սեփականատիրոջ (օգտագործողի) անուն, ազգանուն (անվանումը) | Համարը ըստ հողամասի հատակագծի | Գործառնական նշանակությունը | Շրջադարձային (բեկման) կետեր | Կոորդինատները X | Կոորդինատները Y | Գծային չափեր |
| Մակերեսը (հա) | 0.07038 | 1 | 8538168.6570 | 4396416.4709 | | | | | | | | |
| Ծածկագիրը | 10-003-0002- | | | | 81.81 | համայնք. հող | | | | | | |
| Նպատակային նշանակությունը | Բնակավայրերի | 2 | 8538208.8521 | 4396487.7207 | 17.39 | համայնք. հող | | | | | | |
| Գործառնական նշանակությունը | Բնակելի կառուցապատման | 3 | 8538210.5721 | 4396470.4175 | 59.32 | հարևան | | | | | | |
| Հողամասը ծանրաբեռնված է | | 4 | 8538181.3810 | 4396418.7819 | 12.93 | ճանապարհ | | | | | | |
| | | 1 | 8538168.6570 | 4396416.4709 | | | | | | | | |

Կատարող՝ Անդրանիկ Ներսիսյան « 25 » փետրվար 2021թ.
(անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական № 0141, տրված « 29 » մարտ 2012թ.

Կ.Տ.

Իրավաբանական անձ № 01Ա236352 Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյան ______
(ստորագրություն)

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե

# Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն   N 0141

## ԱՆԴՐԱՆԻԿ ՆՎԵՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության
գործունեության մասնագիտական որակավորման հանձնաժողովի
26 մարտի 2012թ. եզրակացությամբ՝ արձանագրություն N 1
տրվել է

## ՔԱՐՏԵԶԱԳՐՈՂԻ, ԳԵՈԴԵԶԻՍՏԻ, ՉԱՓԱԳՐՈՂԻ (ՀԱՇՎԱՌՈՂԻ), ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐԻ

*ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ*

ՀՀ կառավարությանն առընթեր
անշարժ գույքի կադաստրի
պետական կոմիտեի նախագահ

Ե.ԶԱԽԱՐՅԱՆ

<<29>> մարտի 2012թ.

Դիմող՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տրամադրված տեղեկատվությունը՝ 27.01.2021թ.
տրման ամսաթիվը

| Հ/Հ | Մարզ | Համայնք | Ծածկագիր | Կադաստրային քարտեզ | | Շրջադարձային կետերի կոորդինատներ | | Գեոդեզիական կետերի կոորդինատներ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Միավորի քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) | քանակը | Արժեքը (դրամ) |
| 1 | Վայոց Ձոր | Վայք | 0010-0030-հզ | 1 | 100 | | | | |
| 2 | Վայոց Ձոր | Վայք | 0002-0051 | 1 | 100 | | | | |

Վճարման ենթակա գումարի չափը կրկնավճարով՝ 400 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

Տեղեկատվությունը տրամադրվել է www.e-cadastre.am կայք էջից

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*30 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 57

## ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ԵՂԻՇԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետին, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ կետին համապատասխան և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 33-րդ կետով, 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, 18/05/2006թ. թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով և և հիմք ընդունելով քաղ. Հայկ Եղիշի Մաթևոսյանի 27.01.2021թ. թիվ Մ-35 դիմումը՝ ինքնակամ կառույցը օրինականացնելու մասին

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 5-րդ նրբանցքում գտնվող քաղ. Հայկ Եղիշի Մաթևոսյանի կողմից կառուցված 71,03 քմ մակերեսով բնակելի նպատակային նշանակության ավտոտնակը, որի զբաղեցրած և սպասարկման համար առանձնացված հողամասի մակերեսը կազմում է 0,0043,8 հա, համարել օրինական և ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինական կառույցին տրամադրել հետևյալ հասցեն՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Ջերմուկի խճուղի 5-րդ նրբանցք, ավտոտնակ թիվ 35:
3. Ընդունել ի գիտություն, որ կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում այլ քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցը քանդման ենթակա չէ, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեին՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու նպատակով:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված 71,03 քմ մակերեսով կառույցը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար առանձնացված 0.00438 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով, օրինականացման համար սահմանված չափով և կարգով առաջարկ կատարել կառույցն իրականացրած անձ Հայկ Մաթևոսյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*30 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 58

## ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 2 ԲՆԱԿ. ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,00384 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, 97-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2006թ. մարտի 9-ի թիվ 391-Ն որոշումը՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան 2 բնակ. շենքի հարակից տարածքում գտնվող առանձնացված բնակավայրերի նպատակային նշանակության 0.00384 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատարածքը ճանաչել որպես առանձին միավոր:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողատարածքը հասցեավորել որպես-Վայք համայնք, ք. Վայք, Շահումյան փողոց 2, հողատարածք թիվ 2/31 :
3. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*31 ՄԱՐՏԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ Ու Մ N 59

**ՎԱՅՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ 21 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ 1 ՄԻԱՎՈՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2005թվականի դեկտեմբերի 29-ի 2387-Ն որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Վայքի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 28082017-10-0001/ Շահումյան 21 հասցեում գտնվող շինությունից 64,63 ՔՄ մակերեսով շինությունը առանձնացնել՝ ըստ սույն որոշման անբաժանելի մաս կազմող հատակագծերի:
2. Առանձնացված տարածքը հասցեավորել Վայք համայնք, քաղաք Վայք, Շահումյան փող. 21, տարածք թիվ 12
3. Ընդունել ի գիտություն, որ վերոնշված սեփականության իրավունքի գրանցման վկայականում նշված հասցեն մնում է նույնը՝ Վայք համայնք, քաղաք Վայք, Շահումյան փողոց թիվ 21:
4. Դիմել կադաստրի կոմիտե՝ առանձին սեփականության իրավունքի գրանցման վկայականներ ստանալու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Վայքի համայնքապետարան

Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Վայոց Ձոր համայնք Վայք հասցե ք. Վայք, Շահումյան փող 21

Մասշտաբ 1:200




1.Տարածք
Նկուղ
h=1.95
H=2.20
d=0.10
D=0.50-0.60




1.Տարածք
2-րդ հարկ
h=3.00
H=3.20
d=0.10
D=0.50-0.60

Կատարող՝ Անդրանիկ Ներսիսյան « 12 » ապրիլ 2021թ.

(անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական № 0141, տրված « 29 » մարտ 2012թ.

Իրավաբանական անձ № 01Ա236352 Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյան

Կ.Տ.

(ստորագրություն)

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Վայքի համայնքապետարան

Անուն, ազգանուն (անվանում)

Մարզ Վայոց Ձոր համայնք Վայք հասցե ք. Վայք, Շահումյան փող. 21 տարածք 12

Մասշտաբ 1:200




1.Տարածք
Նկուղ
h=1.95
H=2.20
d=0.10
D=0.50-0.60




1.Տարածք
2-րդ հարկ
h=3.00
H=3.20
d=0.10
D=0.50-0.60

Կատարող՝ Անդրանիկ Ներսիսյան « 12 » ապրիլ 2021թ.
(անուն, ազգանուն) (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայական № 0141, տրված « 29 » մարտ 2012թ.

Կ.Տ.

Իրավաբանական անձ № 01Ա236352 Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյան
(ստորագրություն)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*02 ԱՊՐԻԼԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 60

## ՔԱՂԱՔԱՑԻ ՌԱՅԱ ՄՈՎՍԵՍԻ ՀԱՅՐՅԱՆԻ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2008թ.-ի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Վայք համայնքի Արին բնակավայրի 3-րդ փողոց, թիվ 1/1 հասցեում գտնվող 1980 թվականին կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների նկատմամբ Ռայա Մովսեսի Հայրյանի/ծնված 10.10.1955թ./ սեփականության իրավունքը և համարել նրա սեփականությունը:
2. Սույն որոշման 1-ին կետերում նշված բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական սահմանազատված 0,0771 հա հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*07 ԱՊՐԻԼԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 61

## ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ԱԶԱՏԵԿ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հանգուցյալ Հենրիկ Հովհաննիսյանին պատկանած տնամերձ հողատարածքը/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1227356/ հասցեավորել որպես Վայք համայնք, գյուղ Ազատեկ, 1-ին փողոց, տնամերձ թիվ 10:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru


*07 ԱՊՐԻԼԻ 2021թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 62

## ՔԱՂԱՔԱՑԻ ՋՎԱՐԹ ՎԱԼԻԿԻ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃՈՒՂԻ 34/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Քաղաքացի Ջվարթ Վալիկի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 07042021-10-0001/ Վայք համայնքի Վայք քաղաքի, Ջերմուկի խճ, 34/9 հասցեում գտնվող բնակելի տունը վերահասցեավորել որպես Վայք համայնք, ք. Վայք, Ջերմուկի խճուղի, շենք 34, բնակարան 9:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*07 ԱՊՐԻԼԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 63

### ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴԻԹԵՐ ԱՐՏԱՇԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ՝

1. Քաղաքացի Վարդիթեր Արտաշեսի Հովհաննիսյանին պատկանող Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 14 բնակ. շենքի բակային հատվածում գտնվող ավտոտնակը հասցեավորել որպես Վայք համայնք, քաղաք Վայք, Ջերմուկի խճուղի, ավոտնակ թիվ 14/5:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru


*09 ԱՊՐԻԼԻ 2021թ.*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 64

## ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 69/3 հասցեում <<ՌՈԲԵՆ Յ.Հ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության կողմից/տնօրեն Գևորգ Գևորգյան/ ինքնակամ, առանց համապատասխան փաստաթղթերի և թույլտվության իրականացվում է շինարարություն, որով խախտել է << Քաղաքաշինության մասին >> ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Նշված իրավախախտման համար սահմանված է պատասխանատվություն << Վարչական իրավախախտումների վերաբերյալ >> ՀՀ օրենքի 154 հոդվածի հատկանիշներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 11-րդ և 28-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենքի 154 և 219.1 հոդվածներով՝

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և շինարարական թույլտվության ինքնակամ շինարարություն իրականացնելու համար <<ՌՈԲԵՆ Յ.Հ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը/տնօրեն Գևորգ Գևորգյան/ նկատմամբ սահմանել վարչական տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:
2. Տուգանքի գումարը վճարման ենթակա է Վայքի համայնքապետարանի 900345101407 հաշվին՝ որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում:
3. Սույն որոշման օրինակը ուղարկել <<ՌՈԲԵՆ Յ.Հ>> սահմանափակ պատասխանատվության ընկերությանը/տնօրեն Գևորգ Գևորգյան/:
4. Պարտավորեցնել քաղաքացուն երկամսյա ժամկետում քանդել ինքնակամ իրականացրած կառույցը և տարածքը բերել նախկին տեսքի:

09.04.21թ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. ԱՎԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Vayk - 3801 Shahumyan 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

*12 ԱՊՐԻԼԻ 2021թ.*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 65

## ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՄԱՐՏԻՆ ԱԼԵՔՍԱՆԻ ՇԱՀՍՈՒՎԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՓՈՌ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝

1. Հանգուցյալ Մարատ Ալեքսանի Շահսուվարյանին պատկանած տնամերձ հողատարածքը և օժանդակ շինությունները/սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1037411/ հասցեավորել որպես Վայք համայնք, գյուղ Փոռ, 2-րդ փողոց, տնամերձ թիվ 21:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Թ. ԱՎԵՏՅԱՆ**